ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 4

2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 5/24–ՊԱ ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան **«26» մարտի 2026թ.**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Գրիշա Հովհաննիսյանի, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Արթուր Թադևոսյանը (անձնագիր՝ AT 0200985, տրված՝ 12.07.2019թ.-ին, 009-ի կողմից) (այսուհետ նաև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) 2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 5/24-ՊԱ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություն կատարելու մասին.

1. Պայմանագրի 4.1.2 կետը փոփոխել և ավելացնել հետևյալ նոր պարբերությամբ. «Ամփոփված մրցույթների շրջանակներում մասնավորապես՝ N ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25-26/12-1 ծածկագրով և N ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/28-1, N ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/15-1 ծածկագրերով գնման գործընթացների արդյունքում կնքված պայմանագրերով 2026 թվականին դպրոցներին մատակարարվելիք լաբորատոր սարքավորումների տեխնիկական հատկորոշիչների համապատասխանության դիտարկման արդյունքում ներկայացված հաշվետվությունների և Պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն Խորհրդատուին վճարում է N ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25-26/12-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում միանվագ 350.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները և N ԿԾԿԾԻԳ- ԷԱՃԱՊՁԲ-25/28-1, N ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/15-1 ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում միանվագ 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները:
2. Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 2026 թվականի մարտի 26-ից և համարվում է 2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 5/24–ՊԱ ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, 1 (մեկ) էջից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
4. Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վրացյան 73,
ՀՎՀՀ՝ 02550991,
Բանկ՝ ՀՀ գանձապետարան,
Հ/Հ՝ 90011046670

Տնօրենի պաշտոնակատար՝
Գ. Հովհաննիսյան

ստորագրություն

Կատարող

Արթուր Թադևոսյան
Անձնագիր՝ AT 0200985, տրված՝ 12.07.2019թ.-ին, 009-ի կողմից,
ՀԾՀ՝ 1112820140
Հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի փ., 47շ., 87բն.
Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050553147151001

ստորագրություն